


Վտանգների մեղմացման  
միջոցառումների պետական ծրագրի  
ինտերակտիվ գիրք



**Cal OES**

GOVERNOR'S OFFICE  
OF EMERGENCY SERVICES

Եկե՛ք մեղմացնենք  
Մեյբլ Դը Միթի  
այծիկի հետ



# Արտակարգ իրավիճակների դեպքում

Իմ անունը՝ \_\_\_\_\_

Իմ հեռախոսահամարը՝ \_\_\_\_\_

Իմ հասցեն՝ \_\_\_\_\_

Ծնողի/խնամակալի անունը՝ \_\_\_\_\_

Ծնողի/խնամակալի հեռախոսահամարը՝ \_\_\_\_\_

Այլ կոնտակտային անձի անուն՝ \_\_\_\_\_

Այլ կոնտակտային անձի հեռախոսահամար՝ \_\_\_\_\_

Հանդիպման վայրը՝ \_\_\_\_\_

Արտակարգ իրավիճակների մանրամասներ՝ \_\_\_\_\_

Դեղորայք, բժշկական սարքավորումներ և այլն՝ \_\_\_\_\_

Նշումներ՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_



Բարև, ընկերներ:

Մեղմացման միջոցառումների պլանավորման պետական բաժինը  
մշակել է այս հետաքրքիր ինտերակտիվ գիրքը՝ օգնելու ձեզ  
ծանոթանալ Վտանգների մեղմացման միջոցառումների պետական  
ծրագրին և հասկանալ, թե ինչու է մեղմացումն այդքան կարևոր:

Միացե՛ք Մեյբլ Դը Միթի այծիկի զվարճալի արկածին՝ անվտանգ  
մնալու և ռիսկերը նվազեցնելու ուղիներ գտնելու համար:  
Տեղեկացված լինելն ավելի անվտանգ է դարձնում:

Անպայման խոսե՛ք ձեր ծնողների և ուսուցիչների հետ վտանգների  
մեղմացման ռազմավարությունների մասին, ինչը կարող է օգնել ձեզ  
պաշտպանել ինքներդ ձեզ, ձեր սիրելիներիին և ընկերներիին:

Զվարճացե՛ք: Ձեր սովորածը փոխանցե՛ք ձեր ընտանիքին ու  
ընկերներին:

Եկե՛ք սկսենք:

Ձեր ընկերները Մեղմացման միջոցառումների պլանավորման  
պետական բաժնից:

## Հիմնական պայմաններ

**Վտանգներ.** Դեպքեր, որոնք կարող են վտանգավոր լինել կամ վնաս պատճառել մարդկանց, կենդանիներին կամ վայրերին: Դրանք խնդիրներ են, որոնց պետք է ուշադիր և պատրաստ լինել:

**Մեղմացնել.** Ինչ-որ բան ավելի քիչ վատը կամ ավելի քիչ սարսափելի դարձնել: Խնդիրն ավելի փոքր դարձնելու կամ ավելի հեշտ կարգավորելու ճանապարհ գտնելն է:

**Մեղմացում.** Իրավիճակն ավելի քիչ վատը կամ ավելի քիչ վտանգավոր դարձնելը: Մա մեծ խնդիրներ առաջացնելը կանխելու կամ ինչ-որ բան ավելի հեշտ կառավարելի դարձնելու համար քայլեր ձեռնարկելն է:

**Պլանավորում.** Երբ նախապես մտածում ես, թե ինչ ես ուզում անել և գտնում ես դա անելու լավագույն ձևը: Նման է ճանապարհային քարտեզ կազմելուն, որը կօգնի ձեզ հասնել ձեր նպատակին:

**Վտանգների մեղմացման միջոցառումների պետական ծրագիր (ՎՄՄՊԾ).** Կալիֆոռնիայի Վտանգների մեղմացման միջոցառումների պետական ծրագիրն (ՎՄՄՊԾ) անվտանգությանն ուղղված մեծ ծրագիր է՝ միտված պաշտպանելու մարդկանց, տները և շրջակա միջավայրը երկրաշարժերի, անտառային հրդեհների, ջրհեղեղների և երաշտների նման վտանգներից: Այն ստեղծվել է մասնագետների կողմից, որոնք հասկանում են, թե ինչ կարող է սխալ ընթանալ, և գաղափարներ են մշակում՝ ամեն ինչ ավելի անվտանգ դարձնելու համար:

## Վտանգների տեսակները Կալիֆոռնիայում՝

**Ձնահյուս.** Երբ ձյան, սառույցի, քարերի և հողի մեծ զանգված հանկարծակի սողում է բլուրների կամ լեռների լանջերից: Կարող է տեղի ունենալ իսկապես արագ և շատ հզոր գործընթաց է:

**Երաշտ.** Երբ երկար ժամանակ բավարար ջուր չկա: Կարող է ազդել այնպիսի բաների վրա, ինչպիսիք են գետերը, լճերը և նույնիսկ անձրևը, որոնք անհրաժեշտ է բույսերի աճի համար:

**Երկրաշարժ.** Երբ գետինը հանկարծակի ցնցվում է, քանի որ խորը գետնի տակ գտնվող քարերը շարժվում են: Նույնն է, երբ ձոճում ես սեղանը, և դրա վրա գտնվող ամեն բան տարուբերվում է:

**Ծայրահեղ ցուրտ կամ սառցակալում.** Երբ դրսում իսկապես շատ ցուրտ է: Կարող է վտանգավոր լինել մարդկանց, կենդանիների և բույսերի համար, եթե վերջիններս պատրաստ չեն:

**Ծայրահեղ շոգ.** Երբ դրսում իսկապես շատ շոգ է: Կարող է վտանգավոր լինել մարդկանց, կենդանիների և բույսերի համար, եթե վերջիններս զգույշ չեն:


**Ջրհեղեղ.** Երբ ինչ-որ տեղ չափազանց շատ ջուր կա և ծածկում է գետինը: Կարող է տեղի ունենալ ուժեղ անձրևների, գետերի վարարման կամ օվկիանոսից եկող մեծ ալիքների պատճառով:

**Սողանքներ.** Երբ հողը, քարերը կամ ցեխը սահում են բլուրների կամ լեռների լանջերից, քանի որ խախտվում է լանջի կայունությունը: Նույնն է, երբ հողի կույտ ես սարքում և այն հանկարծակի սահում է բլրի լանջով:

**Էլեկտրաէներգիայի անջատում.** Երբ էլեկտրաէներգիան չի աշխատում որոշ ժամանակ, և դուք չեք կարող օգտագործել էլեկտրաէներգիայի կարիք պահանջող իրերը, ինչպիսիք են լույսը, հեռուստացույցը կամ սառնարանը:

**Ցունամի.** Հսկայական չափերի հասնող ջրային ալիքներ, որոնք կարող են շատ արագ տարածվել օվկիանոսով և ցամաք հասնելուն պես լինել իսկապես մեծ:

**Անտառային հրդեհ.** Մեծ հրդեհ, որն արագ տարածվում է անտառներում, խոտհարքներում կամ բլուրներում: Այս հրդեհները կարող են այրել ծառեր, բույսեր և նույնիսկ շենքեր, եթե շատ մոտ գան:



Բարև՛, ես Կառլոսն եմ:  
Ես ձեզ կսովորեցնեմ՝  
ինչ է Վտանգների  
մեղմացման  
միջոցառումների  
պետական ծրագիր  
2023-ը:



Բարև՛, ես Լիզան եմ:  
Ես այստեղ եմ՝  
օգնելու ձեզ  
զվարճանալ այս  
ընթացքում:




Ես Մեյբլ Դը Միթի  
այծիկն եմ: Անհամբեր  
սպասում եմ բոլոր  
մանրամասները  
բացահայտելուն:



Բարև՛, ես Թայլերն եմ:  
Միասին կծանոթանաք  
մեղմացման  
ռազմավարություններին:





- Վտանգների մեղմացման միջոցառումների կարևոր ձեռնարկ է:
- Նկարագրում է Կալիֆոռնիայի՝
  - անցյալի և ներկայի վտանգները,
  - այդ վտանգները մեղմացնելու պլանը,
  - մեղմացման նպատակները,
  - մեղմացմանն ուղղված գաղափարները:
- Ցույց է տալիս, թե ինչպես կարող է Կալիֆոռնիայի վիճակը բարելավվել և շարունակել առաջ շարժվել վտանգից հետո:
- Ուղղորդում է մարդկանց տեղեկացված որոշումներ կայացնել վտանգների մեղմացման միջոցառումների վերաբերյալ:
- Օգնում է տեղական գործընկերներին նվազեցնել վտանգի առաջացման ռիսկերը:



Վտանգների մեղմացման միջոցառումների պետական ծրագրի կայքէջ  
<https://tinyurl.com/StateHMP>

Խնդրեք որևէ մեծահասակի օգնել  
ձեզ սկանավորել QR կոդը՝ իմանալու  
ավելին Վտանգների մեղմացման  
միջոցառումների պետական ծրագրի,  
ինչպես նաև այլ օգտակար  
ռեսուրսների մասին:

## Վտանգների մեղմացման միջոցառումների պետական ծրագիրը (ՎՄՄՊԾ) թարմացվում է հինգ տարին մեկ:

Վտանգների մեղմացման միջոցառումների պետական ծրագրի պլանավորման քայլերը.

**Խոսել բոլորի հետ.** մենք ներգրավում ենք մեր համայնքի անվտանգության մասին հոգ տանող մարդկանց:

**Բացահայտել վտանգները.** մենք փնտրում ենք այնպիսի բաներ, որոնք կարող են ռիսկային լինել կամ անվտանգ չլինել մեր տարածքում:

**Ստեղծել Վտանգների մեղմացման միջոցառումների պետական ծրագիրը.** մենք մշակում ենք ծրագիր՝ բոլորի անվտանգությունն ապահովելու և ապագայում խնդիրներից խուսափելու համար:

**Ծրագիրը կյանքի կոչել.** մենք աշխատում ենք համատեղ՝ օգտագործելով բոլոր տեսակի ռեսուրսները մեր գաղափարներն իրականացնելու համար:

Ովքեր են օգնում.

**Պետական գործակալությունները.** Այս խմբերն ապահովում են անվտանգությունը պետական մակարդակով:

**Պետական գործիքակազմ.** Ներառում է հզոր ռեսուրսներ, ինչպիսիք են քարտեզներն ու փորձագետները, որոնք շատ ավելին գիտեն անվտանգության մասին:

**Տեղացիների կարծիքներ.** Մենք լսում ենք մեր քաղաքների, երկրների, համայնքների և ցեղերի մարդկանց՝ վերջիններիս գաղափարներին ծանոթանալու համար:

**Այլ օգնականներ.** Մենք նաև հարցնում ենք դպրոցների, հետազոտողների և համանքների անդամների գաղափարները:

Այժմ գիտեք, թե  
ինչպես է  
իրականացվում  
ՎՄՄՊԾ-ն:




# Որոշ տեսակի վտանգներ Կալիֆոռնիայում՝

- Անտառային հրդեհ
  - Երկրաշարժ
  - Ջրհեղեղ
  - Ծայրահեղ շոգ
- Ծայրահեղ ցուրտ կամ սառցակալում
  - Սողանքներ
  - Ցունամի
- Էլեկտրաէներգիայի անջատում
  - Երաշտ
  - Տորնադո



Այս վտանգները կարող են տարբեր վնասների, վնասվածքների, հիվանդությունների և խառնաշփոթի պատճառ հանդիսանալ: Դրանց մասին տեղեկանալով և դրանց պատրաստվելով՝ կարող ենք ապահովել բոլորի անվտանգությունը և նվազեցնել ռիսկերը:



[www.Ready.gov](http://www.Ready.gov)

Խնդրեք որևէ մեծահասակի օգնել ձեզ սկանավորել QR կոդը՝ իմանալու ավելին Վտանգների մեղմացման միջոցառումների պետական ծրագրի, ինչպես նաև այլ օգտակար ռեսուրսների մասին:

Կարդացեք յուրաքանչյուր  
վտանգի սահմանումը և օգնեք  
Մեյրլին  
համապատասխանեցնել  
վտանգը սահմանման հետ:



Երկրաշարժ  
Ջրհեղեղ  
Տորնադո  
Անտառային  
հրդեհ

Ցունամի  
Երաշտ  
Էլեկտրաէներգիայի  
անջատում

1. \_\_\_\_\_ Այս աղետը կարող է տեղի ունենալ, երբ ուժեղ փոթորիկներն առատ անձրև են բերում, ինչի հետևանքով ջրի մակարդակը շատ է բարձրանում:
2. \_\_\_\_\_ Այս աղետը տեղի է ունենում, երբ ծովի տակ կամ ծովին մոտ տեղի ունեցող երկրաշարժը մեծ ալիքներ է առաջացնում օվկիանոսում:
3. \_\_\_\_\_ Երբ երկար ժամանակ բավարար անձրև չի գալիս: Սա չորացնում է հողը, և բավարար ջուր չկա բույսերի, կենդանիների կամ մարդկանց համար:
4. \_\_\_\_\_ Դուք կարող եք զգալ, թե ինչպես է գետինը դողդում և ցնցվում, երբ այս աղետը տեղի ունենա:
5. \_\_\_\_\_ Այս աղետն արագ տարածվում է ցամաքի մեծ տարածքներով և առաջացնում է մեծ քանակությամբ ջերմություն և ծուխ:
6. \_\_\_\_\_ Սա նշանակում է, որ լույսերի, հեռուստացույցների և սառնարանների նման իրերը չեն միանա, մինչև հոսանքը չվերականգնվի:
7. \_\_\_\_\_ Այս աղետը իր հետ բերում է ուժեղ քամիներ, որոնք կարող են վտանգավոր լինել, քանի որ դրանց արդյունքում իրերը թռչում են այս ու այն կողմ կամ ընկնում:

## Ի՞նչ է մեղմացումը

Մեղմացումն այն միջոցառումներն են, ինչ անում են ձեր քաղաքները, համայնքները, ցեղերը կամ պետությունը՝ կանխելու այն, որ աղետները չափազանց մեծ վնասներ չպատճառեն կամ չվնասեն մարդկանց :

Մեղմացումը նման է հեծանիվի սաղավարտ կրելուն: Եթե ընկնեք, կարող եք քերծել ծունկը, բայց գլուխը կմնա անվտանգ: Անտառային հրդեհներ և երկրաշարժեր տեղի են ունենում, բայց մենք կարող ենք ինչ-որ բան անել՝ ձեր քաղաքին և ձեզ հասցված վնասը նվազեցնելու համար:

Մեղմացումն ապահովում է, որ ձեր տներն ու համայնքները ամուր լինեն աղետից առաջ:

## Ո՞վ է օգնում մեղմացման միջոցառումների հարցում:

Մեղմացման միջոցառումները սովորաբար իրականացվում են տեղական, տարածաշրջանային, ցեղային և նահանգային կառավարությունների, ինչպես նաև այլ անձանց կամ կամավորական կազմակերպությունների կողմից: Բայց գիտե՞ք ինչ: Յուրաքանչյուրը կարող է օգնել մեղմացման հարցում:

Օրինակ, դուք կարող եք համոզվել, որ ձեր տունը պատրաստ է անտառային հրդեհներին՝ դրա շուրջը պաշտպանելի տարածք ստեղծելով: Սա նշանակում է մաքրել ամեն ինչ, որը կարող է բռնկվել, ինչպիսիք են թփերը, ծառերը և այլ դյուրավառ նյութերը:

Բոլորը կարող են  
իրենց ներդրումն  
ունենալ մեր համայնքի  
անվտանգությունը  
պահպանելու գործում:





Օգնեք Մեյրլին գտնել բառը  
բառացանկից: Շրջանակի մեջ վերցրեք  
գտած ամեն բառը: Օրինակ՝ «Ջրհեղեղ»  
բառն արդեն վերցված է շրջանակի մեջ  
ձեզ համար: Ձեզ հաջողություն:



ԲԱՌԱՑԱՆԿ՝

~~ՋՐՀԵՂԵՂ~~

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀ

ԵՐԱՇՏ

ԵՐԿՐԱՇԱՐԺ

ՏԱՊ

ՍԱՌՆԱՄԱՆԻՔ

ՊԼԱՆ

ԷԼԵԿՏՐԱԱՆՋԱՏՈՒՄ

ՍՈՂԱՆՔ

|   |   |   |    |              |              |              |              |              |              |              |    |    |   |
|---|---|---|----|--------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|----|----|---|
| Դ | Ջ | Կ | Ա  | Ն            | Տ            | Ա            | Ռ            | Ա            | Յ            | Ի            | Ն  | Դ  | Հ |
| Ե | Օ | Ի | Լ  | Ե            | Հ            | Ր            | Դ            | Ե            | Հ            | Ջ            | ՈՒ | Հ  | Ե |
| Ա | Օ | Ի | Ե  | Ր            | Ա            | Շ            | Տ            | Ֆ            | Կ            | Ն            | Դ  | Ը  | Մ |
| Ե | Ջ | Կ | Ֆ  | Կ            | Ջ            | Կ            | Վ            | Ն            | Ջ            | Կ            | Ֆ  | Ե  | Ա |
| Ր | Լ | Ե | Ֆ  | Ն            | Ջ            | Ց            | Ս            | Ն            | Դ            | Լ            | Ջ  | Ֆ  | Ս |
| Կ | Կ | Դ | Ֆ  | <del>Ջ</del> | <del>Բ</del> | <del>Հ</del> | <del>Ե</del> | <del>Դ</del> | <del>Ե</del> | <del>Դ</del> | Ջ  | Ֆ  | Ո |
| Ր | Հ | Ե | Ր  | Հ            | Տ            | Ի            | Ս            | Օ            | Ե            | Ֆ            | Ա  | Լ  | Ղ |
| Ա | Ք | Լ | Կ  | Դ            | Ն            | Բ            | Ջ            | Հ            | Պ            | Ֆ            | Ջ  | Ս  | Ա |
| Շ | Կ | Մ | Շ  | Ի            | Տ            | Ա            | Պ            | Ջ            | Լ            | Օ            | Ջ  | Ի  | Ն |
| Ա | Լ | Կ | Ն  | Ռ            | Օ            | Գ            | Տ            | Ա            | Ա            | Ռ            | Գ  | ՈՒ | Ք |
| Ր | Ա | Պ | Ջ  | Լ            | ՈՒ           | Պ            | Լ            | Ջ            | Ն            | Կ            | Գ  | Ն  | Մ |
| Ժ | Ե | Ք | ՈՒ | Ա            | Ջ            | Վ            | Բ            | Գ            | Տ            | Հ            | ՈՒ | Դ  | Գ |
| Յ | Ա | Մ | Ի  | Ս            | Ա            | Ռ            | Ն            | Ա            | Մ            | Ա            | Ն  | Ի  | Ք |
| Է | Լ | Ե | Կ  | Տ            | Ր            | Ա            | Ա            | Ն            | Ջ            | Ա            | Տ  | ՈՒ | Մ |

# Մեղմացման միջոցառումների և անվտանգության վերաբերյալ խորհուրդներ ձեզ և ձեր ընտանիքների համար:

**Ծանոթացեք վտանգներին.** Պարզեք, թե երկրաշարժերի կամ ջրհեղեղների նման ինչ վտանգներ կարող են պատահել ձեր մոտակայքում:

**Պատրաստեք արտակարգ իրավիճակների պայուսակ.** Պատրաստեք ձեզ հետ վերցնելու պայուսակ՝ ջրով, թեթև ուտելիքներով, լապտերով, մարտկոցներով, արտակարգ իրավիճակների համար հեռախոսահամարների ցանկով, դեղորայքով, ծածկոցներով, կենդանիների համար նախատեսված պարագաներով և առաջին բուժօգնության պարագաներով:


**Կազմեք պլան տան անդամների հետ և փորձարկեք.** Խոսեք ձեր ընտանիքի հետ այն մասին, թե ինչ անել արտակարգ իրավիճակների ժամանակ և ինչպես կապ պահել արտակարգ իրավիճակի դեպքում:

**Եղեք տեղեկացված.** Հարցրեք ձեր ծնողներին, թե արդյոք ձեր բնակության վայրում կան բաներ, որոնց պետք է ուշադրություն դարձնել, օրինակ՝ փոթորիկներ, վատ եղանակ կամ վտանգավոր տարածքներ:


**Պահպանեք հանգստություն.** Պարզեք գվարձալի տարբերակներ վախենալու պահերին հանգստություն պահպանելու համար, օրինակ՝ խաղալով ձեր սիրելի խաղերը կամ կարդալով ձեր սիրելի գիրքը:

**Տնկեք ծառեր.** Օգնեք մոլորակին՝ ծառեր տնկելով: Դրանք թույլ չեն տալիս, որ ուժեղ անձրևները քշեն-տանեն հողը, և մեզ ստվեր են տալիս:

**Փոխանցեք ձեր սովորածը.** Սովորեցրեք ձեր ընկերներին և ընտանիքին անվտանգության և պատրաստ լինելու մասին:



# Գտե՛ք ձեզ հետ վերցնելու պայուսակի պարագաները



## Գտե՛ք ձեզ հետ վերցնելու պայուսակի պարագաները




|                                                                                       |                                                                                       |
|---------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------|
|  |  |
| Լապտեր                                                                                | Մարսկոց                                                                               |
|  |  |
| Զուր                                                                                  | Ծածկոց                                                                                |
|  |  |
| Դեղորայք                                                                              | Սնունդ                                                                                |
|  |  |
| Ռադիո                                                                                 | Կենդանիների կեր                                                                       |
|  |                                                                                       |
| Առաջին օգնության պայուսակ                                                             |                                                                                       |

## Գտե՛ք խաչքառի բառերը.


Պլան  
Մեղմացնել  
Մարտկոց  
Մնունդ  
Ջուր  
Լապտեր  
Ծածկոց  
Դեղորայք

Հիմա, երբ գտաք ձեզ հետ  
վերցնելու պայուսակի  
պարագաները, օգնեք  
Մեյբլին ասել այդ  
պարագաներից որոշները:



Պլանավորման և պատրաստվածության կայքէջ  
<https://tinyurl.com/planningpreparedness>

Խնդրեք որևէ մեծահասակի օգնել ձեզ  
սկանավորել QR կոդը՝ իմանալու ավելին  
պլանավորման, պատրաստվածության և  
դպրոցական անվտանգության մասին:





Մենք պետք է օգնենք մեր  
ընկերներին անվտանգ տուն  
վերադառնալ քամուց: Եկեք  
միասին աշխատենք և գտնենք  
տուն վերադառնալու լավագույն  
ճանապարհը:

Պատրաստվեք, սկսենք, գնացի՛նք:




Ելք




Պատրաստվեք Պեդրոյի հետ  
[www.ready.gov/kids](http://www.ready.gov/kids)

Խնդրեք որևէ մեծահասակի օգնել ձեզ  
սկանավորել այս QR կոդը՝ պատրաստվելու  
Պեդրոյի հետ :



# Եկեք գունավորենք և զվարճանանք:







Այծերն ունեն մի կարևոր  
առաքելություն  
ուտել վտանգավոր դյուրավառ  
նյութեր, ինչպիսիք են  
մոլախոտերը, այլ բույսերը, խոտը  
և ծառերի ճյուղերը: Այս բույսերն  
ուտելով՝ դրանք օգնում են  
ստեղծել բնական  
հակահրդեհային անջրպետ և  
նվազեցնել անստառային  
հրդեհների տարածման ռիսկը  
մոտակա համայնքներում:



# Պատասխաններ

1. ԶՐԵՆԵՂԵՂ Այս աղետը կարող է տեղի ունենալ, երբ ուժեղ փոթորիկներն առատ անձրև են բերում, ինչի հետևանքով ջրի մակարդակը շատ է բարձրանում:
2. ՑՈՒՆԱՍԻ Այս աղետը տեղի է ունենում, երբ ծովի տակ կամ ծովին մոտ տեղի ունեցող երկրաշարժը մեծ ալիքներ է առաջացնում օվկիանոսում:
3. ԵՐԱՇՏ Երբ երկար ժամանակ բավարար անձրև չի գալիս: Սա չորացնում է հողը, և բավարար ջուր չկա բույսերի, կենդանիների կամ մարդկանց համար:
4. ԵՐԿՐԱՇԱՐԺ Դուք կարող եք զգալ, թե ինչպես է գետինը դրդում և ցնցվում, երբ այս աղետը տեղի ունենա:
5. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՆ Այս աղետը արագ տարածվում է ցամաքի մեծ տարածքներով և առաջացնում է մեծ քանակությամբ ջերմություն և ծուխ:
6. ԷԼԵԿՏՐԱԲՆԵՐԳԻԱՅԻ ԱՆՋԱՏՈՒՄ Սա նշանակում է, որ լույսերի, հեռուստացույցների և սառնարանների նման իրերը չեն միանա, մինչև հոսանքը չվերականգնվի:
7. ՏՈՐՆԱՂՈ Այս աղետը իր հետ բերում է ուժեղ քամիներ, որոնք կարող են վտանգավոր լինել, քանի որ դրանց արդյունքում իրերը թռչում են այս ու այն կողմ կամ ընկնում:









# Cal OES

GOVERNOR'S OFFICE  
OF EMERGENCY SERVICES



Վտանգների մեղմացման միջոցառումների  
պլանավորման բաժնի կայքէջ



<https://tinyurl.com/StateHMP>

Ստեղծվել է՝  
Մեղմացման միջոցառումների  
պլանավորման պետական թիմ՝  
Հայկանուշ Միքայելյան  
Ռայան Մարթ  
Մեթ Մունյոս